

Մ Բ Բ Ի Կ Ի Ծ Ո Վ Ա Կ Ի Ն Լ Ա Տ Ո Կ Ա Յ .

( Ի ԲԵՐԹՈՒԱԾՈՅՆ . ՊԵՏՐՈՍ ՄԵԾ . ) .

Բերեալ զբեղունս մերկացաւ երկիր ըզզարդ ամարան ,  
 Զգեղնեալ տերես տարուբեր վարեն հողմունք մըրըրկոտ .  
 Ի սեպ բարձանց ի Լատսկ թռուցեալ խաղայ Բորէաս ,  
 Զանձրեւ ըզձիւն ըզկարկուտ թափեալ յալեացըն ճերմակ ,  
 Խորշոմըս խորս ակօսէ զերեսօք ջուրցն ընդարձակ ,  
 Ընդ մէգ աեսիլ զայրացեալ անդնդոցն էր ահագին ,  
 Վարազսթեւըն թեւօք ծանրացելովք սառուցիւ .  
 Յորձանապտոյտ եռանդեամբ եռայ յեղերս ջուր տղմուտ .  
 Ալիք բախեալ ընդ ալիս ընդառաջեն լեռնակին ,  
 Եւ ըզնովաւ շուրջ վազեն արխրատեսիլ արհաւրօք .  
 Անդ ի խըռան նըպարից սարսէ շիտակն եղեւին ,  
 Ռուս նաւորգաց ի գուպարս արգէն լօղան դիակունք .  
 Տախտակամաճք անդ նաւուց կան խորտակեալ ցիր եւ ցանք ,

Տեսեալ արքայն ի յուղւոջ զօրհասըն ժանտ եւ զանյագ ,  
 Յողւոց եհան սաստկապէս եւ մըրըրկին սաստ արար ,  
 Եւ ի սըրաին վաստակ մեծ երկնեաց ջըրանցս անդ բանալ ,  
 Զի Ռուսական սերընդոյն ահագնազօրըն ձեռամբ  
 ԸզՎուրջովի ջուրց հոսանս կըցորդեսցէ ընդ նեւայ :

ԼՈՄՈՆՈՍՈՎ .

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՔ .

Կ Ա Ր Մ Ի Ր Ձ Ի Ի Ն .

Տեղ տեղ , ինչպէս Ալպեան , Պիրենեան եւ  
 Հիմալայա լեռներուն վրայ ձիւնը կարմիր  
 գոյն մը կառնու , մանաւանդ երբոր արեւուն  
 ճառագայթները վրան կզարնեն . բայց այս  
 գոյնը միայն ցուք չէ , հապա բուն ձեանը  
 մէջ տոգորուած կենդանութիւն է : Այս  
 կարմրութեան բուն պատճառը մինչեւ ցայ-  
 ժըմ լաւ հասկըցուած չէ : ձանապարհօրդին  
 մէկը նորվեկիոյ լեռներուն վրայ քալած ժա-  
 մանակը գիտեր է որ կարմիր ձիւնը տեղ տեղ  
 մինչեւ քանի մը ոտնաչափ թանձրութիւն

ունի : Երբեմն վարդագոյն ձիւնին երեսը ա-  
 ւելի կարմիր երակներ կերեւէին կըսէ , որոյ  
 ձիւնը գեղեցիկ մարմարիոնի տեսք մը կառ-  
 նուր :

Պարի անունով Անգղիացի նաւապետը կը-  
 պատմէ թէ երբոր մեք դէպ ի հիւսիս կեր-  
 թայինք՝ շատ զարմացանք , տեսնելով որ ձիւ-  
 նը ճերմակ չէ , այլ կարմիր է՝ կէս բթաչափ  
 թանձրութեամբ : Այն ատենը մտքերնիս  
 ընկաւ որ բալխիրով ( այսինքն չախայով ) ճամ-  
 բայ ըրած ատեններս ձիւնին վրայ կարմրա-